ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 12.12.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2019/232

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ ՀՀ Կոտայքի մարզի Արզնիի համայնքապետարան
Մասնակից՝ «Ջատեգ» ՍՊԸ

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ԱՐԶՆԻՀ-ԳՀԱՇՁԲ-2019/1 ՄՏ» ծածկագրով գնանշման հարցում, ՀՀ Կոտայքի մարզի Արզնի համայնքի մշակույթի տան կապիտալ վերանորոգման աշխատանքների ձեռքբերում

Պայմանագրի ծածկագիրը՝ «ԱՐԶՆԻՀ-ԳՀԱՇՁԲ-2019/1 ՄՏ»

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 29.11.2019թ.-ի թիվ 26/26-1/19873-2019 գրությամբ «Ջատեգ» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի նախապատմությունը.

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ Կոտայքի մարզի Արզնիի համայնքապետարանի 11.11.2019թ.-ի թիվ 348/1 գրության հիման վրա, 29.11.2019թ.-ին «Ջատեգ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձի 29.11.2019թ.-ի որոշմամբ գործը ընդունվել է վարույթ և 05.12.2019թ.-ին նշանակվել է նիստ:

Գործի քննությունն ավարտվել է 05.12.2019թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 12.12.2019թ.-ին:

2. ՀՀ Կոտայքի մարզի Արզնիի համայնքապետարանի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.

ՀՀ Կոտայքի մարզի Արզնիի համայնքապետարանը 25.10.2019թ.-ին թիվ 335 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Սույնով ծանուցվում է, որ ՀՀ Կոտայքի մարզի Արզնիի համայնքապետարանի և «Ջատեգ» ՍՊԸ-ի միջև 2019թ. ապրիլի 30-ին կնքված «Պետության կարիքների համար ՀՀ Կոտայքի մարզի Արզնի համայնքի մշակույթի տան կապիտալ վերանորոգման աշխատանքների կատարման» թիվ «ԱՐԶՆԻՀ-ԳՀԱՇՁԲ-2019/1 ՄՏ» պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) համաձայն պետք է կատարեր շինարարական աշխատանքներ, սակայն խախտել է պայմանագրի պայմանները: Հիմք ընդունելով պայմանագրի 3.1.4 կետի «գ» ենթակետը ՀՀ Կոտայքի մարզի Արզնիի համայնքապետարանը 2019 թվականի հոկտեմբերի 25-ին միակողմանի լուծում է Պայմանագիրը:

Միաժամանակ «Ջատեգ» ՍՊԸ-ն պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված

գանձապետական 900005028106 հաշվեհամարին փոխանցել 124,004 (մեկ հարյուր քսանչորս հազար չորս) ՀՀ դրամ՝ որպես Պայմանագրի 6.3 կետով սահմանված տուգանք:

Միաժամանակ տեղեկացվում է, որ ՀՀ Կոտայքի մարզի Արզնիի համայնքապետարանի կողմից որպես պայմանագրի կատարման ապահովում, «Ջատեգ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը ներկայացվելու է համապատասխան բանկին՝ վճարման պահանջագրում նշված 2,480,070 (երկու միլիոն չորս հարյուր ութսուն հազար յոթանասուն) ՀՀ դրամը սահմանված կարգով և ժամկետում ՀՀ ֆինանսների նախարարության գանձապետական 900005000758 հաշվեհամարին փոխանցելու նպատակով:»:

Այնուհետև, ՀՀ Կոտայքի մարզի Արզնիի համայնքապետարանը 11.11.2019թ.-ին թիվ 348/1 գրությամբ, դիմելով ՀՀ ֆինանսների նախարարությանը, հավելյալ հայտնել է հետևյալը.

«Ի պատասխան Ձեր 2019 թվականի նոյեմբերի 06-ի թիվ 1/26-1/18282-2019 գրության ներկայացնում ենք ՀՀ Կոտայքի մարզի Արզնիի համայնքապետարանի և «Ջատեգ» ՍՊԸ-ի միջև 2019թ. ապրիլի 30-ին կնքված «Պետության կարիքների համար ՀՀ Կոտայքի մարզի Արզնի համայնքի մշակույթի տան կապիտալ վերանորոգման աշխատանքների կատարման» թիվ «ԱՐԶՆԻՀ-ԳՀԱՇՁԲ-2019/1 ՄՏ» պայմանագրի 3.1.4 կետի «գ» ենթակետը ՀՀ Կոտայքի մարզի Արզնիի համայնքապետարանի 2019 թվականի հոկտեմբերի 25-ին պայմանագրի միակողմանի լուծման գրությունը, «Ջատեգ» ՍՊԸ-ին ուղարկված ծանուցումները և ստացված պատասխանների պատճենները:»:

Կրկին անգամ՝ 06.12.2019թ.-ին թիվ 385 գրությամբ Պատվիրատուն հայտնել է հեևյալը.

«ՀՀ ֆինանսների նախարարությունը 29.11.2019թ.-ի թիվ 26/26-1/19873-2019 գրությամբ «Ջատեգ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել էր ընթացակարգ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին (այսուհետ՝ Բողոքներ քննող անձ) ներկայացնելով համապատասխան հիմքեր:

2019 թվականի դեկտեմբերի 05-ին ժամը 16:30-ին, ք. Երևան, Կոմիտաս 54բ հասցեում, 1-ին հարկի N 1 նիստերի դահլիճում տեղի է ունեցել նիստ, որի հետևանքով անհրաժեշտություն է առաջացել ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացնել Արզնի համայնքի ղեկավար Ալեքսանդր Միրզոևի, համայնքի ղեկավարի տեղակալ Էդիկ Աֆյանի և

«Դանիելյան» փաստաբանական գրասենյակ ՍՊԸ-ի տնօրեն Արսեն Դանիելյանի անձնագրի լուսապատճենները, ***«Արզնի համայնքի նախկին ճաշարանի շենքի վերակառուցում կուլտուրայի տան»*** *նախագծից հավելված՝ շինարարական օրացույցային գրաֆիկը և լուսանկարներ շինարարության ընթացքի վերաբերյալ:»:*

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացրել են «Ջատեգ» ՍՊԸ-ի վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը:

3. <u>«Ջատեգ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը</u>.

Բողոքներ քննող անձը 02.12.2019թ.-ին գրությամբ դիմել է «Ջատեգ» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 29.11.2019թ.-ի թիվ 26/26-1/19873-2019 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը, ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, չի ներկայացել հրավիրված նիստերին՝ ներկայացնելով գրավոր դիրքորոշում:

Ներկայացված դիրքորոշմամբ Մասնակիցը հայտնել է հետևյալը.

«ՀՀ ֆինանսների նախարարության 29.11.2019թ. թիվ 26/26-1/19873-2019 գրությամբ «Ջատեգ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնած ընթացակարգի վերաբերյալ հայտնում եմ, որ ՀՀ Կուտայքի մարզի Արզնիի համայնքապետարանի (այսուհետ՝ Պատվիրատու) 2019 թվականի հոկտեմբերի 25-ի թիվ 330 գրությունը հակասում է 15.10.2019թ. թիվ 322 գրությամբ ներկայացված պայմաններին և առաջարկին: Միակողմանի լուծելու հիմքն անօրինական է, քանի որ չի համապատասխանում 30.04.2019թ. կնքված ՀՀ Կոտայքի մարզի Արզնիի համայնքապետարանի կարիքների համար ՀՀ Կոտայքի մարզի Արզնի համայնքի մշակույթի տան կապիտալ վերանորոգման աշխատանքների կատարման N «ԱՐԶՆԻՀ-ԳՀԱՇՁԲ-2019/1 ՄՏ» ծածկագրով պետական գնման պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված պայմաններին:

Պայմանագրի 3.1.4 կետի գ ենթակետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին:

Հայտնում եմ, որ պայմանագրին համապատասխան իրականացվել են քանդման և միջնորմների (թեթևաբետոնե բլոկներից 100մմ հաստությամբ) կառուցման աշխատանքներ, որի համար ստորագրված և կնքված առկա են համապատասխան փաստաթղթեր (կատարողական ակտ N 1) կից ներկայացվում է:

Անհրաժեշտ եմ համարում նշել նաև, որ իրականացվել են մի շարք աշխատանքներ Պատվիրատուի հետ բանավոր քննարկման արդյունքում և Պատվիրատուի բանավոր հավաստմամբ այն մասին, որ այդ աշխատանքները կարող են իրականացվել մինչև համապատասխան փոփոխություններ իրականացնելը, ակնհայտ է, որ որոշ աշխատանքերն իրականացվել են, սակայն դեռ փաստաթղթավորումը չի իրականացվել, որոնք պայմանագրում նույնպես ներառված չեն եղել, սակայն առանց այդ աշխատանքները կատարելու, հնարավոր չէր իրականացնել նույնիսկ պայանագրով նախատեսված քանդման աշխատանքները, մասնավորապես՝ պատերից, առաստաղից գաջի սվաղի քանդման և խեցեսալե հատակի քանդման աշխատանքներից առաջ՝ պայմանագրով նախատեսված չէր նշված հատվածներից ապամոնտաժված, որոշ մասն էլ նույնիսկ Պատվիրատուին տրամադրված փայտե և գորգե ծածկոցները, պատուհանների ճաղավանդակների ապամոնտաժումն ու որոշ մասի տրամադրումը Պատվիրատուին, նախկին ջեռուցման, ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի ապամոնտաժման աշխատանքներն և այլն: Նշվածի, ինչպես նաև հետագա աշխատանքներ իրականացնելու համար մասնավորապես՝ տանիքի կառուցման, նախագծանախահաշվային փաստաթղթերում առկա անահմապատասխանությունների, չնախատեսված որոշ միջնորմների քանդման և կառուցման, տանիքի քառակուսի խողովակների փոխարինման, ինչպես նաև տանիքում շլակով և ց/ավազե խառնուրդով ծածկույթի իրականացման և տանիքում մետաղապլաստե պատուհանի տեղադրման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի մասին, Պատվիրատուին տեղեկացրել ենք նաև գրավոր, սակայն ինչպես նախկինում բարձրաձայնած հարցերը այդպես էլ վերջինս Պատվիրատուն պատասխանել է, որ իրականացրեք հետագայում փաստաթղթավում անելու պայմանով, ինչը արդեն իսկ անհանգստացնում էր, որ այդքան ժամանակ անցնելուց հետո չէր փաստաթղթավորվում:

Միաժամանակ հայտնում եմ, որ պայմանագրի 1-ին կետի 1.3 ենթակետով և Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետներով, որը որոշվում է կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով, բոլոր աշխատանքների կատարման ժամկետներ են սահմանված՝ «Սկիզբը» - «Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո», իսկ «Ավարտը» - «Պայմանագրի ավարտը» (720 /յոթ հարյուր քսան/ օրացուցային օր պայմանագրի ստորագրման օրվանից):

Պայմանագրի 3.2 կետի 3.2.3 ենթակետով սահմանված է, որ Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք, սակայն սահմանված պահանջների համաձայն աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածքում այլ անձանց կողմից իրականացվել են զոդման աշխատանքներ, ինչը նույնպես խոչընդոտ է հանդիսացել պայմանագրով սահմանված աշխատանքներն իրականացնելու համար:

Տեղեկացնում եմ նաև, որ մեր կազմակերպությունը մասնակցելով «ԱՐԶՆԻՀ-ԳՀԱՇՁԲ-2019/1 ՄՏ» ծածկագրով գնանշման հարցմանը ցածր գին է առաջարկել և բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով առաջին «ԱՐԶՆԻՀ-ԳՀԱՇՁԲ-2019/1 ՄՏ» ծածկագրով գնանշման հարցման հրավերով (այսուհետև՝ հրավեր) սահմանված է, որ «Աշխատանքի տեխնիկական բնութագրերը, ինչպես նաև մասնագիրը, տեխնիկական տվյալները և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը կազմում են կնքվելիք պայմանագրի անբաժանելի մասը, որի նախագիծը ներկայացված է սույն հրավերի N 6 հավելվածում», իսկ նշված հավելվածի՝ կնքվելիք պայմանագրի նախագծով, սահմանվել է, որ. պայմանագրի 1-ին կետի 1.3 ենթակետով և պայմանագրի անբաժանելի մաս կազմող թիվ 2 հավելվածի համաձայն՝ բոլոր աշխատանքների կատարման ժամկետներ են սահմանված՝ «Սկիզբը» «Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո», իսկ «Ավարտը» - «Պայմանագրի ավարտը» (720 /յոթ հարյուր քսան/ օրացուցային օր պայմանագրի ստորագրման օրվանից):

Հաշվի առնելով վերոգրյալը, հայտնում եմ, որ «Ջատեգ» ՍՊԸ-ի կողմից կատարված աշխատանքը համապատասխանում է նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին և Պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծման հիմքը անօրինական է:»:

4. <u>ՍՑ-LO-2019/232 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

ՀՀ Կոտայքի մարզի Արզնիի համայնքապետարանի (այսուհետ՝ Պատվիրատու) և «Ջատեգ» ՍՊԸ-ի միջև 30.04.2019թ.-ին կնքվել է թիվ «ԱՐԶՆԻՀ-ԳՀԱՇՁԲ-2019/1 ՄՏ» ծածկագրով պետական գնման պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր):

«Ջատեգ» ՍՊԸ-ն պարտավորվել Պայմանագրի թիվ 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված ՀՀ Կոտայքի մարզի Արզնի համայնքի մշակույթի տան կապիտալ վերանորոգման աշխատանքները կատարել Պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում:

Պայմանագրով նախատեսված աշխատանքները նախատեսվել են կատարվել պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո՝ 720 (յոթ հարյուր քսան) օրացուցային օրվա ընթացքում:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվել են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

Պայմանագրի 8.1 կետի համաձայն՝ Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

www.gnumner.am համացանցային կայքում 06.11.2019թ.-ին հրապարակված պայմանագրի միակողմանի լուծման մասին ծանուցման համաձայն՝ սույնով ծանուցվում է, որ ՀՀ Կոտայքի մարզի Արզնիի համայնքապետարանի և «Ջատեգ» ՍՊԸ-ի միջև 2019թ. ապրիլի 30-ին կնքված «Պետության կարիքների համար ՀՀ Կոտայքի մարզի Արզնի համայնքի մշակույթի տան կապիտալ վերանորոգման աշխատանքների կատարման» թիվ «ԱՐԶՆԻՀ-ԳՀԱՇՁԲ-2019/1 ՄՏ» պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) համաձայն պետք է կատարեր շինարարական աշխատանքներ, սակայն խախտել է պայմանագրի պայմանները:

Հիմք ընդունելով պայմանագրի 3.1.4 կետի «գ» ենթակետը ՀՀ Կոտայքի մարզի Արզնիի համայնքապետարանը 2019 թվականի հոկտեմբերի 25-ին միակողմանի լուծել է Պայմանագիրը:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 29.11.2019թ. թիվ 26/26-1/19873-2019 գրությամբ «Ջատեգ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ նաև Օրենսգիրք) 347-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 352-րդ հոդվածի համաձայն՝

1. Եթե պարտավորությունը նախատեսում է կամ հնարավորություն է ընձեռում որոշել դրա օրը կամ ժամանակահատվածը, ապա պարտավորությունը պետք է կատարվի այդ օրը կամ այդ ժամանակահատվածի ցանկացած պահին:

2. Այն դեպքերում, երբ պարտավորությունը կատարման ժամկետ չի նախատեսում և ժամկետի որոշման պայմաններ չի պարունակում, այն պետք է կատարվի պարտավորության ծագումից հետո՝ ողջամիտ ժամկետում:

3. Ողջամիտ ժամկետում չկատարված պարտավորությունը, ինչպես նաև այն պարտավորությունը, որի կատարման ժամկետը որոշվում է պահանջի պահով, պարտապանը պարտավոր է կատարել այդ մասին պարտատիրոջ պահանջի ներկայացման օրվանից հետո՝ յոթնօրյա ժամկետում, եթե պարտավորության կատարման այլ ժամկետ չի բխում օրենքից, այլ իրավական ակտերից, պարտավորության պայմաններից, գործարար շրջանառության սովորույթներից կամ պարտավորության էությունից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների,

աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար պատասխանատու է մեղքի առկայության դեպքում, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցում է, որ ինքը պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները:

Օրենսգրքի 420-րդ հոդվածի համաձայն՝

1. Եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, ապա դատարանը համապատասխանաբար նվազեցնում է պարտապանի պատասխանատվության չափը: Դատարանն իրավունք ունի նաև նվազեցնել պարտապանի պատասխանատվության չափը, եթե պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար:

2. Սույն հոդվածի 1-ին կետի կանոնները համապատասխանաբար կիրառվում են նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված ՀՀ Կոտայքի մարզի Արզնի համայնքի մշակույթի տան կապիտալ վերանորոգման աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

Պայմանագրի 1.3 կետի համաձայն՝ Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ 720 /յոթ հարյուր քսան/ օրացուցային օր պայմանագրի ստորագրման օրվանից:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

Պայմանագրի 3.1.4 կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե՝

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին:

Վերոնշյալ հոդվածների համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ օրենսդիրն որպես պարտավորությունը խախտելու համար պատասխանատվության պարտադիր պայման սահմանել է պարտավորությունը խախտած անձի մեղքի առկայությունը: Պարտապանը պարտավորությունը անպատշաճ կատարելու համար չի կարող կրել պատասխանատվություն՝ մեղքի բացակայության պայմաններում: Ուստի, այն դեպքերում, երբ պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը խախտելու մեջ բացակայում է պարտապանի մեղավորությունը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել մասնակցի (պարտապանի)՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ավելին, եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, պարտապանի պատասխանատվության չափը պետք է նվազեցվի, ինչպես նաև այն դեպքերում, երբ պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց

նվազեցման համար, ընդ որում, նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Վերոգրյալ իրավանորմերի համալիր վերլուծությունը՝ գործով հաստատված փաստերի գնահատմամբ, թույլ է տալիս եզրակացնել հետևյալը.

ՀՀ Կոտայքի մարզի Արզնիի համայնքապետարանի և «Ջատեգ» ՍՊԸ-ի միջև 30.04.2019թ.-ին կնքված թիվ «ԱՐԶՆԻՀ-ԳՀԱՇՁԲ-2019/1 ՄՏ» ծածկագրով պետական գնման պայմանագիր հիման վրա «Ջատեգ» ՍՊԸ-ն պարտավորվել Պայմանագրի թիվ 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված ՀՀ Կոտայքի մարզի Արզնի համայնքի մշակույթի տան կապիտալ վերանորոգման աշխատանքները կատարել Պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում:

Պայմանագրով նախատեսված աշխատանքները նախատեսվել են կատարվել պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո՝ 720 (յոթ հարյուր քսան) օրացուցային օրվա ընթացքում:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվել են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

Պայմանագրի 8.1 կետի համաձայն՝ Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

www.gnumner.am համացանցային կայքում 06.11.2019թ.-ին հրապարակված պայմանագրի միակողմանի լուծման մասին ծանուցման համաձայն՝ սույնով ծանուցվում է, որ ՀՀ Կոտայքի մարզի Արզնիի համայնքապետարանի և «Ջատեգ» ՍՊԸ-ի միջև 2019թ. ապրիլի 30-ին կնքված «Պետության կարիքների համար ՀՀ Կոտայքի մարզի Արզնի համայնքի մշակույթի տան կապիտալ վերանորոգման աշխատանքների կատարման» թիվ «ԱՐԶՆԻՀ-ԳՀԱՇՁԲ-2019/1 ՄՏ» պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) համաձայն պետք է կատարեր շինարարական աշխատանքներ, սակայն խախտել է պայմանագրի պայմանները:

Հիմք ընդունելով պայմանագրի 3.1.4 կետի «գ» ենթակետը ՀՀ Կոտայքի մարզի Արզնիի համայնքապետարանը 2019 թվականի հոկտեմբերի 25-ին միակողմանի լուծել է Պայմանագիրը:

Սույն գործի փաստերի հիման վրա, Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ սույն գործում առկա փաստերով չի հիմնավորվում Պատվիրատուի կողմից Պայմանագիրը մասնակի լուծելու ծանուցմամբ նշված Պայմանագրի 3.1.4 կետի «գ» ենթակետի խախտման փաստը, որն էլ հնարավորությունն չի տալիս Բողոքներ քննող անձին գնահատելու և ապա արձանագրելու մասնակից կողմից պայմանագրով ստանձնած պարտավորությունների խախտման փաստը:

Այսպես՝

Պատվիրատուն Ծանուցմամբ արձանագրել է, որ Մասնակիցը խախտել է պայմանագրի պայմանները և հիմք ընդունելով պայմանագրի 3.1.4 կետի «գ» ենթակետի դրույթները 25.10.2019թ.-ին միակողմանի լուծել է Պայմանագիրը:

Սակայն սույն գործում առկա փաստերի ուսումնասիրության արդյունքում, Բողոքներ քննող անձը հարկ է համարում նշել, որ գործով որևէ վերաբերելի ապացույց, առ այն, որ մասնակցի կողմից թույլ են տրվել Պայմանագրի 3.1.4 կետի «գ» ենթակետի դրույթների խախտում, այն է՝ կապալառուի կողմից կատարված ո՞ր աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին, առկա չէ:

Ընդ որում Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ կապալառուի կողմից կատարված աշխատանքի նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին չհամապատասխանելու փաստը, կարող էր ու պետք է փաստվեր միայն որոշակի փաստական հանգամանքներով, այդ թվում՝ աշխատանքների նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնող ընկերության կողմից տրված հավաստմամբ, գրությամբ և այլն:

Անդրադառնալով Պատվիրատուի 06.12.2019թ.-ին թիվ 385 գրությամբ տրամադրված շինարարական օրացույցային գրաֆիկին և շինարարության ընթացքի վերաբերյալ կատարված լուսանկարներին, Բողոքներ քննող անձը դրանք համարում է ոչ արժանահավատ տեղեկատվություն, այն պարզ փաստերի հաշվառմամբ, որ նախ, հենց նույն գրությամբ Պատվիրատուն նշել է, որ տրամադրում է «***«Արզնի համայնքի նախկին ճաշարանի շենքի վերակառուցում կուլտուրայի տան»*** *նախագծից հավելված՝ շինարարական օրացույցային գրաֆիկը և լուսանկարներ շինարարության ընթացքի վերաբերյալ:»:* Այն դեպքում, երբ Ընթացակարգը հայտարարվել էր, հրավերը կազմվել էր, Պայմանագիրն էլ կնքվել է՝ **Արզնի համայնքի մշակույթի տան կապիտալ վերանորոգման**

աշխատանքներ կատարելու համար: Երկրորդ, ներկայացված լուսանկարներից հնարավոր չէ պարզել, թե դրանք իրապես վերաբերում են Պայմանագրի առարկա հանդիսացող Արզնի համայնքի մշակույթի տանը, թե՞ ոչ, եթե այո, ապա երբ են լուսանկարվել՝ մինչև աշխատանքներ սկսելը, թե ընթացքում: Նույն իրավիճակն էլ ներկայացված շինարարական օրացույցային գրաֆիկին է վերաբերում՝ հնարավոր չէ պարզել, թե այդ փաստաթուղթն իրապես վերաբերում է Պայմանագրի առարկա հանդիսացող Արզնի համայնքի մշակույթի տան կապիտալ վերանորոգման աշխատանքներին, թե՞ ոչ, նշված չէ որևէ նույնականացնող տվյալ:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ … մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը.

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4 ի N 526 Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 33-րդ կետի 16-րդ ենթակետի համաձայն՝ պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնած Պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Պայմանագիր կնքած անձը համարվում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել Մասնակցին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 29.11.2019թ.-ի թիվ 26/26-1/19873-2019 գրությամբ «Ջատեգ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2019/232 ծածկագրով ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**